

**Սույն փաստաթուղթը միայն փաստաթղթային գործիք է, եւ հաստատությունները դրա բովանդակության համար որեւէ պատասխանատվություն չեն կրում:**

▶ B

**Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 2978/94 կանոնակարգ (ԵՏՀ)**

**Առանձին բալաստ նավթատար նավերում բալաստի հատվածի տարողունակության չափում իրականացնելու վերաբերյալ ԾՄԿ-ի Ա.747(18) որոշումն իրականացնելու մասին:**

(ՊՏ L 319, 12.12.1994թ., էջ 1)

Փոփոխված՝

Պաշտոնական տեղեկագրով

	Թիվ	էջ	ամսաթիվ
▶ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի M1 նոյեմբերի 5-ի թիվ 2099/2002 (ԵՀ) կանոնակարգ	L 324	1	29.11.2002թ.
<hr/>			
▶ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի M2 սեպտեմբերի 29-ի թիվ 1882/2003 կանոնակարգ (ԵՀ)	L 284	1	31.10.2003 թ.
<hr/>			

▼B

**Խորհրդի 1994 թվականի նոյեմբերի 21-ի թիվ 2978/94 կանոնակարգ (ԵՏՀ)**

**Առանձին բալաստ նավթատար նավերում բալաստի հատվածի տարողունակության չափում  
իրականացնելու վերաբերյալ ԾՄԿ-ի Ա.747(18) որոշումն իրականացնելու մասին**

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ, մասնավորապես, դրա 84(2) հոդվածը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը <sup>(1)</sup>,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական կոմիտեի եզրակացությունը <sup>(2)</sup>,

գործելով Պայմանագրի 189-րդ հոդվածում նշված ընթացակարգին համապատասխան <sup>(3)</sup>,

քանի որ ծովագնաց նավթատար նավերի կողմից աշխատանքային եւ վթարային աղտոտումները դեռ շարունակվում են, եւ ավանդական նախագծով նավթատար նավերով նավթի տեղափոխումը շարունակական վտանգ է ներկայացնում ծովային միջավայրի համար,

քանի որ շրջակա միջավայրի համար բարենպաստ նավթատար նավերի նախագծման եւ շահագործման վերաբերյալ միջազգայնորեն ընդունված կարգերը հաստատվել են Ծովագնացության միջազգային կազմակերպության (ԾՄԿ) հովանու ներքո,

քանի որ շրջակա միջավայրի համար բարենպաստ նավթատար նավերի գործածումը նպաստավոր է եւ՝ առափնյա պետությունների, եւ՝ արդյունաբերության համար,

քանի որ միջազգային կոնվենցիաները նավթատար նավերի հավաստագրման պայմաններ են պարունակում, քանի որ նավթատար նավերում առանձին բալաստ ցիստեռների տոննաժի չափման մեթոդն ավելի է կատարելագործվել ԾՄԿ-ի կողմից,

քանի որ անդամ պետություններից բոլորը, բացառությամբ մեկի, հաստատել եւ կիրառել են 1973 թվականի՝ «Նավերից առաջացող աղտոտման կանխարգելման մասին» միջազգային կոնվենցիան եւ 1978 թվականի 1978 թվականի՝ դրան վերաբերող արձանագրությունը

(MARPOL 73/78), քանի որ բոլոր անդամ պետությունները հաստատել եւ կիրառել են 1969 թվականի «Նավերի տոննաժի չափման մասին» միջազգային կոնվենցիան,

քանի որ ԾՄԿ Ասամբլեայի 1991 թվականի նոյեմբերի 6-ին ընդունած Ա. 741(18) բանաձեւում եւ դրա իրավահաջորդ՝ «Նավթատար նավերում առանձին բալաստ ցիստեռնների տարողունակության չափում իրականացնելու մասին» Ա.747(18) բանաձեւում՝ ընդունված ԾՄԿ Ասամբլեայի կողմից 1993 թվականի նոյեմբերի 4-ին, միջավայրի համար բարենպաստ նավթատար նավերի նախագծումը եւ առանձին բալաստ ցիստեռնների կիրառումը խրախուսելու ընդհանուր ցանկություն են արտահայտում,

քանի որ Ա. 741(18) որոշմամբ ԾՄԿ Ասամբլեան (i) կառավարություններին առաջարկում է խորհուրդ տալ նավահանգիստների եւ նավակայանների ղեկավարներին ընդունել իրենց առաջարկները՝ MARPOL 73/78-ի I-ին հավելվածի 13-րդ կարգավորման համաձայն առանձին բալաստ տարողունակությամբ բոլոր նավթատար նավերի համախառն տոննաժի հիման վրա վճարների գնահատման ժամանակ առանձին բալաստ ցիստեռնների տոննաժն իջեցնելու վերաբերյալ, եւ (ii) կառավարություններին նաեւ առաջարկում է խորհուրդ տալ նավավարման իշխանություններին՝ գործել առաջարկներին համապատասխան,

քանի որ Խորհուրդը նորմալ է ընդունել Համայնքի կամ ազգային մակարդակով ակտիվ գործելու անհրաժեշտությունը, որպեսզի ապահովվի ծովային անվտանգության պահանջներին պատշաճ արձագանքն ու ծովային աղտոտման կանխարգելումը, քանի որ ցանկալի է խթանել երկկորպուսանի նավթատար նավերի եւ MARPOL 73/78-ի I-ին հավելվածի 13Զ կարգավորման պահանջները բավարարող այլընտրանքային նախագծման նավթատար նավերի, ինչպես նաեւ բալաստ նավթատար նավերի կիրառումը,

(<sup>1</sup>) ՊՏ թիվ C 5, 07.01.1994թ., էջ 4:

(<sup>2</sup>) ՊՏ թիվ C 295, 22.10.1994թ., էջ 26:

(<sup>3</sup>) Եվրոպական պառլամենտի՝ 1994 թվականի մայիսի 3-ի եզրակացությունը, Խորհրդի՝ 1994 թվականի սեպտեմբերի 19-ի ընդհանուր դիրքորոշումը (ՊՏ թիվ C 301, 27.10.1994թ., էջ 34) եւ Եվրոպական պառլամենտի 1994 թվականի նոյեմբերի 16-ի (Պաշտոնական տեղեկագրում դեռ չի հրապարակվել) որոշումը:

▼B

քանի որ երկկորպուսանի նավթատար նավերը եւ այլընտրանքային նախագծմամբ նավթատար նավերը պետք է կիրառվեն սույն Կանոնակարգի իմաստով այնպես, կարծես դրանց առանձին բալաստ ցիստեռնները համապատասխանել են MARPOL 73/78-ի I-ին հավելվածի 13-րդ կանոնակարգին,

քանի որ նպատակահարմար չէ տուգանել նավատերերին եւ շահագործողներին՝ միջավայրի համար բարենպաստ նախագիծ եւ կիրառում ունեցող նավթատար նավեր օգտագործելու համար,

քանի որ, մասնավորապես, առանձին բալաստ ցիստեռնների տոննաժի համար գանձումներն այն դեպքում, երբ այդ ցիստեռնները բեռներ տեղափոխելու համար չեն օգտագործվում, ֆինանսապես անբարենպաստ վիճակում են դնում նրանց, ովքեր ավելի մաքուր միջավայր ունենալուն ուղղված կարեւոր քայլ են կատարել,

քանի որ տնտեսական պատճառներով, առանձին նավահանգստի ղեկավարները չեն ցանկանում անբարենպաստ իրավիճակում հայտնվել՝ լինելով միակը, ով կիրառում է ԾՄԿ-ի որոշումը,

քանի որ ԾՄԿ Ա.722(17) եւ Ա.747(18) որոշումները համաձայնեցվել են բայց չեն կիրառվել բոլոր անդամ պետությունների կողմից,

քանի որ ծովային միջավայրը ավանդական նախագծմամբ նավթատար նավերի կողմից աղտոտումից պաշտպանելու նպատակով Համայնքում պետք է համընդհանուր կիրառում ունենան նավահանգիստների ու նավակայանների եւ նավավարման իշխանությունների կողմից նավթատար նավերի համար գանձումների վերաբերյալ միջազգայնորեն ընդունված կարգերը,

քանի որ Համայնքի ներսում մրցակցության վատթարացումից խուսափելու եւ խնայողական ու ծախսարդյունավետ լուծումների հասնելու նպատակով սուբսիդիարության սկզբունքին համապատասխանող միջազգայնորեն ընդունված կարգերի իրականացմանն ուղղված համաձայնեցված գործողությունը կարող է լավագույնս հաստատվել Կանոնակարգի միջոցով,

քանի որ դրոշի պետությունը կամ Նավթից առաջացող աղտոտման կանխարգելման մասին միջազգային հավաստագիր եւ Միջազգային տոննաժի հավաստագիր (1969թ.) տրամադրող մյուս մարմինները, ինչպես նաեւ նավատերերն ու նավթատար նավերի համար վճարներ

գանձող անձինք պետք է ԾՄԿ–ի Ա.747(18) որոշումն իրականացնելիս միասին աշխատեն, որպեսզի ուժեղացնեն ծովային միջավայրի պաշտպանությունը,

քանի որ միջավայրի համար բարենպաստ նավերի համար գանձվող վճարները նվազեցնելու համար որոշ անդամ պետություններում արդեն համակարգեր են հիմնվել ԾՄԿ Ա.747(18) որոշումից զատ նաեւ այլ հիմքերով, քանի որ, համաձայն որոշման ոգուն, տոննաժի վրա հիմնված վճարների համար այլընտրանքային ծրագրեր պետք է ներկայացվեն՝ ըստ սովորական սակագների տոկոսային տարբերության, այնպես որ միջին տարբերությունը լինի առնվազն նույնը, ինչ նախատեսված է որոշմամբ, եւ քանի որ պետք է հավելյալ համոզվել, որ առանձին բալաստ նավթատար նավերը երբեք ավելի քիչ բարենպաստ վերաբերմունքի չարժանանան, նույնիսկ երբ վճարները տոննաժի հիման վրա չեն հաշվարկվում,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

#### *Հոդված 1*

Համաձայն սույն Կանոնակարգի դրույթների՝ Համայնքի ներսում նավահանգիստների ու նավակայանների եւ նավավարման իշխանությունները պետք է

ա) իրականացնեն 1993 թվականի նոյեմբերի 4-ին Ծովագնացության միջազգային կազմակերպության (ԾՄԿ) Ասամբլեայի կողմից ընդունված Առանձին բալաստ նավթատար նավերում բալաստի հատվածի տարողունակության չափում իրականացնելու վերաբերյալ Համայնքի ԾՄԿ–ի Ա.747(18) որոշման շրջանակներում, որի հավելվածը ներառված է Կանոնակարգի I հավելվածում, որպեսզի խրախուսվի առանձին բալաստ ցիստեռններով նավթատար նավերի կիրառումը՝ ներառյալ երկկորպուսանի նավթատար նավերը եւ այլընտրանքային նախագծման նավթատար նավերը, կամ

բ) գանձվող վճարների նվազեցման համակարգեր կիրառել առանձին բալաստ նավթատար նավերի համար, որոնք տարբերվում են ԾՄԿ–ի Ա.747(18) որոշումից՝ հավատարիմ մնալով դրա ոգուն:

▼B

## Հոդված 2

Սույն Կանոնակարգը վերաբերվում է այն նավթատար նավերին, որոնք.

- կարող են հատուկ նշանակված ցիստեռններում առանձին բալաստներ պարունակել,
- նախագծված, հարմարեցված, սարքավորված են եւ շահագործվում են որպես առանձին բալաստ նավթատար նավեր՝ ներառյալ երկկորպուսանի նավթատար նավերը եւ այլընտրանքային նախագծման նավթատար նավերը,
- համապատասխանում են 1969 թվականի Նավերի տոննաժի չափման մասին միջազգային կոնվենցիայի պահանջներին, եւ
- ունեն Միջազգային տոննաժի հավաստագիր (1969թ.):

## Հոդված 3

1. Սույն Կանոնակարգի իմաստով՝

- ա) «նավթատար նավ» նշանակում է այնպիսի նավ, որը համապատասխանում է նավթատար նավի՝ MARPOL 73/78-ի I հավելվածի 1 (4) կարգավորման սահմանմանը,
- բ) «առանձին բալաստ» նշանակում է բալաստ, որը համապատասխանում է առանձին բալաստի՝ MARPOL 73/78-ի I հավելվածի 1 (17) կարգավորման սահմանմանը,
- գ) «առանձին բալաստ ցիստեռն» նշանակում է ցիստեռն, որը բացառապես օգտագործվում է առանձին ծանրաբեռի տեղափոխման համար,
- դ) «առանձին բալաստ նավթատար նավ» նշանակում է նավթատար նավ, որի վրա կան առանձին բալաստ ցիստեռններ եւ որը, որպես առանձին բալաստ ցիստեռններ պարունակող նավթատար նավ, հավաստագրված է դրոշի պետության կառավարության կամ դրա անունից գործելու իրավասու այլ մարմինների կողմից: Նավթից առաջացող աղտոտման կանխարգելման մասին միջազգային հավաստագրի հավելվածի համապատասխան պարբերության մեջ այդ մարմինը պետք է հստակ նշի այս համապատասխանությունը,

ե) «երկկորպուսանի նավթատար նավ» նշանակում է առանձին բալաստ նավթատար նավ, որը կառուցված է MARPOL 73/78-ի I հավելվածի 13Զ (3) կարգավորմամբ սահմանված պահանջներին համապատասխան,

զ) «այլընտրանքային նախագծմամբ նավթատար նավ» նշանակում է առանձին բալաստ նավթատար նավ, որը կառուցված է MARPOL 73/78-ի I հավելվածի 13Զ (4) եւ (5) կարգավորմամբ սահմանված պահանջներին համապատասխան,

▼M1

է) «MARPOL 73/78» նշանակում է 1978 թվականի արձանագրությամբ փոփոխված 1973 թվականի՝ «Նավերից առաջացող աղտոտման կանխարգելման մասին» միջազգային կոնվենցիայի ամենաթարմ տարբերակը,

▼B

ը) «նավահանգիստների եւ նավակայանների ղեկավարը» հանրային կամ մասնավոր անձ է, ով նավերից վճար է գանձում՝ նավավարման համար պայմաններ եւ ծառայություններ տրամադրելու համար,

թ) «նավավարման ղեկավարը» հանրային կամ մասնավոր անձ է, ով նավավարման ծառայություններ մատուցելու իրավունք ունի,

ժ) «համախառն տոննաժ» նշանակում է նավի ընդհանուր չափը, որը որոշվում է 1969 թվականի «Նավերի տոննաժի չափման մասին» միջազգային կոնվենցիայի դրույթներին համապատասխան,

ժա) «նվազեցված համախառն տոննաժը» նավթատար նավի այն համախառն տոննաժն է, որն ստացվում է, երբ առանձին բալաստ ցիստեռնի՝ սույն Կանոնակարգի I հավելվածի 4-րդ պարբերության մեջ տրված բանաձեւին համապատասխան՝ համախառն տոննաժը հանվում է նավի ընդհանուր համախառն տոննաժից:

2. II հավելվածը պարունակում է 1-ի (ա), (բ), (գ) եւ (դ) պարբերությունների տերմիններին MARPOL 73/78-ի տված սահմանումները:

#### Հոդված 4

1969 թվականի «Նավերի տոննաժի չափման մասին» միջազգային կոնվենցիայի համաձայն չափված առանձին բալաստ նավթատար նավերին 1969 թվականի Միջազգային տոննաժի հավաստագիր տրամադրելիս, սույն Կանոնակարգի նպատակով, իրավասու մարմինը պետք է «Նշումներ» վերնագրի տակ մուտքագրում կատարի, որը կհամապատասխանի սույն Կանոնակարգի I հավելվածի 3-րդ պարբերությանը եւ նշի.

i) նավի առանձին բալաստ ցիստեռնների տոննաժը. այս տոննաժը պետք է հաշվարկվի՝ համաձայն սույն Կանոնակարգի I հավելվածի 4-րդ պարբերությամբ սահմանված մեթոդների եւ ընթացակարգերի, եւ

ii) նավի նվազեցված համախառն տոննաժը:

#### Հոդված 5

1. Ամբողջապես կամ մասամբ նավի համախառն տոննաժի արժեքի վրա հիմնված՝ նավթատար նավերի համար վճարները գնահատելիս, նավահանգստի եւ նավակայանի ղեկավարներն ու նավավարման ղեկավարները պետք է բացառեն նավթատար նավի առանձին բալաստ ցիստեռնների տոննաժը, որպեսզի իրենց հաշվարկները հիմնված լինեն նավի Միջազգային տոննաժի հավաստագրի «Նշումներ» վերնագրի տակ նշված՝ նվազեցված համախառն տոննաժի վրա:

2. Որպես այլընտրանք՝ նավահանգստի ու նավակայանի եւ նավավարման ղեկավարները պետք է ապահովեն, որ 2-րդ հոդվածով նախատեսված՝ սույն Կանոնակարգի շրջանակներում ներառված նավթատար նավերի վճարներն առնվազն 17%-ով ցածր լինեն նույն տոննաժի նավթատար նավերի վճարներից, որոնք չունեն առանձին բալաստ ցիստեռններ:

Այն նավահանգստի ու նավակայանի եւ նավավարման ղեկավարները, որոնք 1994 թվականի հունիսի 13-ի դրությամբ արդեն, առաջին ենթապարբերությամբ նախատեսված, սակայն ավելի ցածր տոկոսով հաստատուն դրույքաչափի համակարգով են վճարը գանձում, պետք է 17%-ը որպես նվազագույն ընդունեն ոչ ուշ, քան մինչեւ 1997 թվականի հունվարի 1-ը:



3. Եթե վճարները գնահատվում են համախառն տոննաժից բացի այլ հիմքերով, ապա նավահանգստի ու նավակայանի ղեկավարները, ինչպես նաև նավավարման ղեկավարները, պետք է ապահովեն, որ առանձին բալաստ նավթատար նավերը երբեք պակաս բարենպաստ վերաբերմունքի չարժանանան, քան երբ վճարները հաշվարկվում են 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն:

4. Բոլոր առանձին բալաստ նավթատար նավերի համար նավահանգստի, նավակայանի և նավավարման ղեկավարները պետք է 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերություններում նշված համակարգերից միայն մեկը կիրառեն:

### *Հոդված 6*

Սույն Կանոնակարգի I հավելվածը կարող է փոփոխվել՝ համաձայն 7-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի, որպեսզի հաշվի առնվեն ԾՄԿ-ի Ա.747(18) որոշման փոփոխությունները և ուժի մեջ մտած համապատասխան միջազգային կոնվենցիաները:

#### ▼M1

3-րդ հոդվածով նշված միջազգային փաստաթղթերի փոփոխությունները կարող են բացառվել սույն Կանոնակարգի շրջանակից՝ Անվտանգ ծովերի և նավերից առաջացող աղտոտումը կանխարգելող կոմիտե ստեղծող՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 2099/2002 Կանոնակարգի (ԵՀ) 5-րդ հոդվածին համապատասխան:

#### ▼M2

### *Հոդված 7*

1. Հանձնաժողովին աջակցում է կոմիտեն: Կոմիտեն հանդիպում է Հանձնաժողովի հրավերով, երբ սույն Կանոնակարգի կիրարկման համար անհրաժեշտ է համարում:

2. Այն դեպքերում, երբ հղում է կատարվում սույն հոդվածին, կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ (²) որոշման 5-րդ և 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

1999/468/ԵՀ որոշման 5(6) հոդվածով սահմանված ժամկետը երեք ամիս է:

3. Կոմիտեն ընդունում է իր ընթացակարգային կանոնները:

1) ՊՏ L 324, 29.11.2002թ., էջ 1:

2) Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման ընթացակարգը սահմանող՝ Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի 1999/468/ԵՀ որոշում (ՊՏ L 184, 17.07.1999թ., էջ 23):

▼B

### *Հոդված 8*

1. Անդամ պետությունները պետք է պատշաճ ժամկետում, սակայն նախքան 1995 թվականի դեկտեմբերի 31-ը, ընդունեն օրենքներ, կանոնակարգեր կամ վարչական դրույթներ, որոնք կարող են անհրաժեշտ լինել՝ սույն Կանոնակարգն իրականացնելու համար:

Այդ միջոցառումները, մասնավորապես, ներառում են հսկողության կազմակերպումը, ընթացակարգը եւ միջոցները:

2. Անդամ պետությունները պետք է ամեն տարի Հանձնաժողով ուղարկեն բոլոր առկա տեղեկությունները, որոնք վերաբերում են սույն Կանոնակարգի կիրառմանը՝ ներառյալ իրենց նավահանգստի, նավակայանի եւ նավավարման ղեկավարների կատարած խախտումները:

3. Երբ անդամ պետություններն ընդունում են 1-ին պարբերությամբ նշված միջոցները, ապա դրանք պետք է պարունակեն սույն Կանոնակարգին կատարվող հղում կամ դրանց պաշտոնական հրապարակման պահին պետք է ուղեկցվեն նման հղումով: Նման հղում կատարելու մեթոդները սահմանվում են անդամ պետությունների կողմից:

4. Անդամ պետությունները պետք է անմիջապես Հանձնաժողով ներկայացնեն ներպետական իրավունքի բոլոր դրույթները, որոնք նրանք ընդունում են սույն Կանոնակարգով կարգավորվող ոլորտում: Հանձնաժողովը դրա մասին տեղեկացնում է մյուս անդամ պետություններին:

### *Հոդված 9*

1. 8-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անդամ պետություններից հաշվետվություն ստանալուց հետո Հանձնաժողովը պետք է ամեն տարի վերանայի սույն Կանոնակարգի իրականացումը:
2. Հանձնաժողովը 5-րդ հոդվածով նախատեսված կարգով պետք է մինչև 1998 թվականի դեկտեմբերի 31-ը համակարգի աշխատանքի գնահատման հաշվետվություն ներկայացնի Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ:

### *Հոդված 10*

Սույն Կանոնակարգն ուժի մեջ է մտնում 1996 թվականի հունվարի 1-ից:

Սույն Կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է եւ անմիջականորեն գործում է բոլոր անդամ պետություններում:

▼B

## ՀԱՎԵԼՎԱԾ I

Նավթատար նավերում առանձին բալաստ ցիստեռնների տոննաժի չափում

Որպեսզի նավթատար նավերում առանձին բալաստ ցիստեռնների տոննաժի չափման միասնական հիմք կիրառվի, կառավարությունները, միջազգային հավաստագրեր տրամադրող իրավասու մարմինները եւ նավթատար նավերի համար վարձեր գանձող անձինք պետք է ընդունեն հետեւյալ սկզբունքները.

1. Նավը պետք է հավաստագրված լինի որպես առանձին բալաստ նավթատար նավ՝ համաձայն Նավթից առաջացող աղտոտման կանխարգելման մասին միջազգային հավաստագրի հավելման 5-րդ պարբերության, եւ առանձին բալաստ ցիստեռնների գտնվելու վայրը պետք է նշվի հավելման 5.2 պարբերության մեջ:

2. Առանձին բալաստ ցիստեռններն այն ցիստեռններն են, որոնք բացառապես օգտագործվում են առանձին ջրի բալաստ տեղափոխելու համար՝ սահմանված MARPOL 73/78-ի I հավելվածի 1(17) կարգավորմամբ: Առանձին բալաստ ցիստեռնները պետք է ունենան առանձին բալաստ պոմպերի եւ խողովակաշարերի համակարգ, որոնք նախատեսված են միայն ծովից բալաստ ջրեր վերցնելու եւ ծով արտամղելու համար: Առանձին բալաստ ցիստեռնները քաղցրահամ ջրի համակարգին միացնող ոչ մի խողովակային միացում չպետք է լինի: Առանձին բալաստ ցիստեռններից եւ ոչ մեկը չպետք է օգտագործվի որեւէ նավաբեռ տեղափոխելու կամ նավի պահուստները, կամ նյութերը պահելու համար:

3. 1969 թվականի Միջազգային տոննաժի հավաստագրում՝ «Նշումներ» վերնագրի տակ, նավթատար նավերում առանձին բալաստ ցիստեռնների տոննաժի վերաբերյալ հետեւյալ մուտքագրումն է կատարվում.

«Առանձին բալաստ ցիստեռնները համապատասխանում են 1973 թվականի «Նավերից առաջացող աղտոտման կանխարգելման մասին» միջազգային կոնվենցիայի I հավելվածի 13-րդ կարգավորմանը, որը փոփոխվել է 1978 թվականի՝ դրան վերաբերող արձանագրությամբ, եւ բացառապես առանձին ջրային բալաստի տեղափոխման համար նախատեսված այդ ցիստեռնների ընդհանուր տոննաժը պետք է լինի...»

Նվազեցված համախառն տոննաժը, որը պետք է օգտագործվի տոննաժի վրա հիմնված վճարների հաշվարկման համար, պետք է լինի...»

4. Վերոնշված առանձին բալաստ ցիստեռնների տոննաժը հաշվարկվում է՝ համաձայն հետևյալ բանաձևի.

$$K_1 \times V_p$$

որտեղ՝

$K = 0,2 + 0,02 \log_{10} V$  (կամ աղյուսակի միջոցով ներկայացված է 1969 թվականի՝ «Նավերի տոննաժի չափման մասին» միջազգային կոնվենցիայի 2-րդ հավելվածում):

$V$  = նավի փակ տարածությունների ընդհանուր ծավալը խորանարդ մետրերով, ինչպես սահմանված է 1969 թվականի՝ «Նավերի տոննաժի չափման մասին» միջազգային կոնվենցիայի 3-րդ կարգավորմամբ:

$V_p$  = 1969 թվականի՝ «Նավերի տոննաժի չափման մասին» միջազգային կոնվենցիայի 6-րդ կարգավորմամբ չափված առանձին բալաստ ցիստեռնների ընդհանուր ծավալը խորանարդ մետրերով:

▼B

## ՀԱՎԵԼՎԱԾ II

3-րդ հոդվածի 1-ի (ա), (բ), (ե) եւ (զ) պարբերությունների եզրերին MARPOL 73/78-ի տրված սահմանումները

*Վերականգնված պարբերություն 1-ի (ա).*

«Նավթատար նավ» նշանակում է նավ, որը կառուցված կամ հարմարեցված է՝ իր բեռների համար նախատեսված մասում գլխավորապես մեծ քանակությամբ նավթ տեղափոխելու համար, եւ մեծ քանակությամբ նավթի նավաբեռ կամ մասնակի նավաբեռ տեղափոխելիս, ներառում է համակցված փոխադրումներ իրականացնող տրանսպորտ եւ ցանկացած «քիմիական նյութեր տեղափոխող նավեր», ինչպես սահմանված է սույն Կոնվենցիայի II հավելվածով:

«Համակցված փոխադրումներ իրականացնող տրանսպորտ» նշանակում է նավ, որը նախագծված է նավթ կամ խուռնաբեռն պինդ նյութերից բեռներ տեղափոխելու համար:

«Քիմիական նյութեր տեղափոխող նավ» նշանակում է այնպիսի նավ, որը կառուցված կամ հարմարեցված է՝ գլխավորապես մեծ քանակությամբ թունավոր հեղուկ զանգված տեղափոխելու համար, եւ մեծ քանակությամբ թունավոր հեղուկ զանգվածով փոխադրաբեռ կամ մասնակի փոխադրաբեռ տեղափոխելիս, ներառում է «նավթատար նավը», ինչպես սահմանված է սույն Կոնվենցիայի I հավելվածում:

*Վերականգնված 1 (բ) պարբերություն.*

«Առանձին բալաստ» նշանակում է բալաստ ջուր, որը լցվում է ցիստեռնի մեջ, որն իր հերթին ամբողջությամբ առանձնացված է նավաբեռ նավթից եւ վառելիքի համակարգից, եւ որը մշտապես տեղադրված է բալաստի փոխադրման համար կամ բալաստի, կամ նավթից եւ թունավոր զանգվածներից զատ այլ նավաբեռի տեղափոխման համար, որը սահմանված է սույն Կոնվենցիայի հավելվածներում:

*Վերականգնված 1(ե) պարբերություն.*

«Երկկորպուսանի նավթատար նավ» նշանակում է նավթատար նավ, որի ամբողջ նավաբեռի ցիստեռնի երկարությունը պետք է պաշտպանված լինի բալաստ ցիստեռններով կամ նավաբեռի եւ վառելիքի ցիստեռններից բացի այլ տարածություններով:

*Վերականգնված 1 (գ) պարբերություն.*

«Այլընտրանքային նախագծման նավթատար նավ» նշանակում է.

- նավթատար նավ, որի նախագծումն այնպիսին է, որ նավաբեռի եւ ծովի միջեւ մեկ սահման ստեղծող հատակի մակերեսին գործադրված՝ նավաբեռի եւ գոլորշու ճնշումը չգերազանցի արտաքին հիդրոստատիկ ջրի ճնշումը,

- նավթատար նավ, որը նախագծված է համաձայն այնպիսի մեթոդների, որոնք բախման կամ ծանծաղուտի վրա նստելու դեպքում նավթից առաջացող աղտոտման դեմ առնվազն նույն մակարդակի պաշտպանություն են ապահովում եւ սկզբունքորեն հաստատված են Ծովային միջավայրի պաշտպանության կոմիտեի կողմից՝ հիմնված Ծովագնացության միջազգային կազմակերպության մշակված ստանդարտների վրա: